Գործընկերություն հանուն լավ կառավարման

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ III-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԾՐԱԳՐԻ (2023-2027)

Եվրոպական միության եւ Եվրոպայի խորհրդի առաջատար համատեղ նախաձեռնություն

Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում իրականացվող տեղական և տարածաշրջանային ծրագրեր

Ծրագրերի կենտրոնում են արդարադատության համակարգերի ամրապնդումը, տնտեսական հանցագործությունների կանխարգելումը և դրանց դեմ պայքարը, հավասարության և խտրականության դեմ պայքարի խթանումը, ինչպես նաև կանանց համար արդարադատության հասանելիության բարելավումը

Հատուկ ծրագիր՝ Բելառուսի ժողովրդավարական ուժերի եւ քաղաքացիական հասարակության հետ համատեղ՝ հավասարությունը եւ խտրականության բացառումը խթանելու համար

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Եվրոպական միություն

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Համաֆինանսավորվում և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից

http://partnership-governance-eu.coe.int

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Ավելի անկախ, արդյունավետ եւ հաշվետու արդարադատության համակարգեր

Դատախազության անկախության ապահովմանը եւ ապօրինի գույքի դեմ պայքարին ուղղված օրենսդրություն

Բարձրագույն դատական խորհրդում դատական բողոքարկման նոր համակարգի միջոցով հաշվետվողականության բարձրացում

Վճռաբեկ դատարանի համար մշակման փուլում գտնվող տեղեկությունների որոնման եւ հղումների նոր թվային գործիք

125+ հաշտարարներ, որոնք պատրաստ են վեճերը լուծել հաշտարարության միջոցով՝ որպես դատական որոշումների այլընտրանք

80% Դատարանների գործերի ծանրաբեռնվածության **80%-ով** կրճատում՝ փոքր դրամական պահանջները նոտարներին փոխանցելու միջոցով

987 մասնագետներ, որոնք անցել են վերապատրաստում՝ դատաիրավական համակարգը բարելավելու նպատակով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Կոռուպցիայի եւ փողերի լվացման կանխարգելման, հայտնաբերման եւ հակազդման նպատակով կառույցների ամրապնդում

Ամրապնդվել է ազդարարի պաշտպանության իրավական շրջանակը

Լավարկվել է ռիսկերի դիտանցման եւ մեղմացման մեթոդաբանությունը

160

Ֆինանսական եւ ոչ ֆինանսական կազմակերպությունների **160** մասնագետ անցել է վերապատրաստում

90+

Իրավապահ մարմինների **90+** աշխատակից լիազորվել է տնտեսական հանցագործությունների արդյունավետ քննություն իրականացնելու համար

Հասանելի է հանրային ծառայողների ծառայողական էթիկայի եւ բարեվարքության ուղեցույցը

Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչներն առավել պատրաստված են ապացուցահեն գործեր հարուցելու համար:

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Խտրականության, ատելության խոսքի եւ ռասայական խտրականության դեմ պայքարի նպատակով ներդրվել են արդյունավետ քաղաքականություն եւ իրավական պաշտպանության միջոցներ

Ընդլայնվել են ազգային կարողությունները ԼԳԲՏԻ անձանց իրավունքների վերաբերյալ Եվրոպական դատարանի առաջին վճռի կատարման ուղղությամբ

Բարելավվել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի՝ տուժողների պաշտպանության կարողությունները

Ուսանողներին եւ մանկավարժներին իրավունք է տրվել հակազդելու ատելության խոսքին

Պետության եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջեւ համագործակցությունն ընդլայնվել է

Լրագրողները կարողանում են իրադարձությունները լուսաբանել՝ ցուցաբերելով պատասխանատու, էթիկայի նորմերին համապատասխան եւ ատելության խոսքից զերծ վերաբերմունք

268

Իրավապահ մարմինների **268** մասնագետի կարողությունները կատարելագործվել են ատելության խոսքի դեպքերն արդյունավետորեն կանխելու եւ կառավարելու համար:

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Ավելի գենդերազգայուն դատական համակարգ

29

Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ մենթորական ծրագրի շրջանակներում դատական ոլորտի 29 մասնագետ ստացել է վկայական

Մենթորական մեթոդաբանությունը ներառվել է Արդարադատության ակադեմիայի ուսումնական ծրագրում

Բարելավվել է հավաստի եւ ապացուցահեն տվյալների հիման վրա բարեփոխումների մշակման կարողությունը: